ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.09.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ՍՑ-ՆԳ-2021/253

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 30.08.2021թ. թիվ 26/26-1/13772-2021 գրությամբ «Ազուռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 21.08.2021թ. թիվ ՍՄ//34496-2021 գրության հիման վրա, 30.08.2021թ. թիվ 26/26-1/13772-2021 գրությամբ նախաձեռնել է «Ազուռ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Ազուռ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Ազուռ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացնելու օրվա դրությամբ գրավոր դիրքորոշում չի ներկայացվել:

«Ազուռ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/253 ընթացակարգի շրջանակներում 02.09.2021թ. ժամը 09:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. <u>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 21.08.2021թ. թիվ ՍՄ//34496-2021 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «ԱԶՈՒՌ» ՍՊԸ-ի միջև 2020 թվականի դեկտեմբերի 29-ին կնքված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Վ-Ա» ծածկագրով «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպության կարիքների համար սննդամթերքի մատակարարման հետ կապված պայմանագրի էական խախտումների հետևանքով «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը լուծել է «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Վ-Ա» ծածկագրով մատակարարման պայմանագիրը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 5-ի N 526 որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ կետի պահանջները, «ԱԶՈՒՌ» ՍՊԸ-ին գնումներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթացը նախաձեռնելու նպատակով, Ձեզ եմ ներկայացնում վերոնշյալ գնման ընթացակարգին վերաբերող փաստաթղթերի փաթեթը»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/253 ընթացակարգի շրջանակներում 02.09.2021թ. ժամը 09:35-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/253 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/253 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Ազուռ» ՍՊԸ-ի միջև 29.12.2020թ. կնքվել է թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Վ-Ա» ծածկագրով պետության կարիքների համար սննդամթերքի մատակարարման պայմանագիր (հետայսու նաև՝ Պայմանագիր), որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. Պայմանագրին կից հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո՝ մինչև 25.12.2021թ.:

3. Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 30.12.2020թ. կնքվել է թիվ 1 Համաձայնագիրը, որի համաձայն նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

4. Գնորդի կողմից 02.08.2021թ. և 11.08.2021թ. Վաճառողին ներկայացվել են սննդամթերքի մատակարարման հայտեր:

5. Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից 09.08.2021թ. կազմվել է թիվ 1 արձանագրությունը, հետևյալ բովանդակությամբ.

«Մենք ներքոստորագրյալներս, «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Ս.Զարոյանս, անդամներ՝ Ա.Սարգսյանս, Ս.Զիրոյանս տալիս ենք սույն արձանագրությունն այն մասին, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Ազուռ» ՍՊԸ-ի միջև 29.12.2020թ. կնքված ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Վ-Ա ծածկագրով պայմանագրի շրջանակներում վերոնշյալ կազմակերպության կողմից օգոստոսի 2-ին սննդի հայտ պահանջագրով ներկայացված ապրանքները չեն մատակարարվել»:

6. Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից 16.08.2021թ. կազմվել է թիվ 2 արձանագրությունը, հետևյալ բովանդակությամբ.

«Մենք ներքոստորագրյալներս, «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Ս.Զարոյանս,

անդամներ՝ Ա.Սարգսյանս, Ս.Զիրոյանս տալիս ենք սույն արձանագրությունն այն մասին, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Ազուռ» ՍՊԸ-ի միջև 29.12.2020թ. կնքված ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Վ-Ա ծածկագրով պայմանագրի շրջանակներում վերոնշյալ կազմակերպության կողմից օգոստոսի 11-ին սննդի հայտ պահանջագրով ներկայացված ապրանքները չեն մատակարարվել»:

7. Պատվիրատուն 16.08.2021թ. azurllc@mail.ru էլ. փոստին ուղղված նամակով Ընկերությանը հայտնել է հետևյալը.

«Հարգելի գործընկեր, 29 հունվարի 2021թ. կնքված ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Վ-Ա ծածկագրով սննդամթերքի մատակարարման պայմանագրով նախատեսված և 11.08.2021թ. հայտ պահանջագրում ներկայացված և Ձեր կողմից խոստացված ապրանքների մատակարարումը չի իրականացվել: Խնդրում եմ մեկօրյա ժամկետում մատակարարել պահանջագրում ներկայացված ապրանքները»:

8. Այնուհետև՝ 17.08.2021թ., Պատվիրատուն azurllc@mail.ru էլ. փոստին ուղղված նամակով Ընկերությանը հայտնել է հետևյալը.

«Հարգելի գործընկեր, 29 հունվարի 2021թ. կնքված ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Վ-Ա ծածկագրով սննդամթերքի մատակարարման պայմանագրով նախատեսված և 11.08.2021թ. հայտ պահանջագրում ներկայացված և Ձեր կողմից խոստացված ապրանքների մատակարարումը չի իրականացվել: 16.08.2021թ. Ձեր ընկերության աշխատակցի հետ ունեցած հեռախոսազրույցում մեր կողմից ապրանքների մատակարարման պահանջին պատասխան նա նշեց, որ ապրանքները չեն մատակարարվելու և մենք կարող ենք սկսել պայմանագրի լուծարային գործընթաց:

Խնդրում եմ ներկայացնել պարզաբանում»:

9. ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 20.08.2021թ. թիվ 1 որոշման 1-ին կետով որոշում է կայացրել սույն թվականի օգոստոսի 20-ից միակողմ հրաժարվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Ազուռ» ՍՊԸ-ի միջև 29.12.2020թ. կնքված ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Վ-Ա ծածկագրով կնքված «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման պայմանագրի կատարումից:

10. Պատվիրատուի կողմից www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում (հետայսու նաև՝ Տեղեկագիր) 20.08.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 30.08.2021թ. թիվ 26/26-1/13772-2021 գրությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 21.08.2021թ. թիվ ՍՄ//34496-2021 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (հետայսու նաև՝ Օրենսգիրք) 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպես, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Ազուռ» ՍՊԸ-ի միջև 29.12.2020թ. կնքվել է թիվ «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Վ-Ա» ծածկագրով պետության կարիքների համար սննդամթերքի մատակարարման պայմանագիր, որի 1-ին կետի 1.1 ենթակետի համաձայն՝ Վաճառողը պարտավորվել է սույն պայմանագրով սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, իսկ Գնորդը պարտավորվել է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

<u>Պայմանագրին կից հավելված N 1-ով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո՝ մինչև 25.12.2021թ.:</u>

Պայմանագրի շրջանակներում կողմերի միջև 30.12.2020թ. կնքվել է թիվ 1 Համաձայնագիրը, որի համաձայն նախատեսվել են ֆինանսական միջոցներ:

Գնորդի կողմից 02.08.2021թ. և 11.08.2021թ. Վաճառողին ներկայացվել են սննդամթերքի մատակարարման հայտեր:

Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից 09.08.2021թ. կազմվել է թիվ 1 արձանագրությունը, հետևյալ բովանդակությամբ.

«Մենք ներքոստորագրյալներս, «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Ս.Զարոյանս, անդամներ՝ Ա.Սարգսյանս, Ս.Զիրոյանս տալիս ենք սույն արձանագրությունն այն մասին, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Ազուռ» ՍՊԸ-ի միջև 29.12.2020թ. կնքված ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Վ-Ա ծածկագրով պայմանագրի շրջանակներում վերոնշյալ կազմակերպության կողմից օգոստոսի 2-ին սննդի հայտ պահանջագրով ներկայացված ապրանքները չեն մատակարարվել»:

Պատվիրատուի պատասխանատու ստորաբաժանման ղեկավարի կողմից 16.08.2021թ. կազմվել է թիվ 2 արձանագրությունը, հետևյալ բովանդակությամբ.

«Մենք ներքոստորագրյալներս, «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Ս.Զարոյանս, անդամներ՝ Ա.Սարգսյանս, Ս.Զիրոյանս տալիս ենք սույն արձանագրությունն այն մասին, որ ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Ազուռ» ՍՊԸ-ի միջև 29.12.2020թ. կնքված ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Վ-Ա ծածկագրով պայմանագրի շրջանակներում վերոնշյալ կազմակերպության կողմից օգոստոսի 11-ին սննդի հայտ պահանջագրով ներկայացված ապրանքները չեն մատակարարվել»:

Պատվիրատուն 16.08.2021թ. azurllc@mail.ru էլ. փոստին ուղղված նամակով Ընկերությանը հայտնել է հետևյալը.

«Հարգելի գործընկեր, 29 հունվարի 2021թ. կնքված ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Վ-Ա ծածկագրով սննդամթերքի մատակարարման պայմանագրով նախատեսված և 11.08.2021թ. հայտ պահանջագրում ներկայացված և Ձեր կողմից խոստացված ապրանքների մատակարարումը չի իրականացվել: Խնդրում եմ մեկօրյա ժամկետում մատակարարել պահանջագրում ներկայացված ապրանքները»:

Այնուհետև՝ 17.08.2021թ., Պատվիրատուն azurllc@mail.ru էլ. փոստին ուղղված նամակով Ընկերությանը հայտնել է հետևյալը.

«Հարգելի գործընկեր, 29 հունվարի 2021թ. կնքված ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Վ-Ա ծածկագրով սննդամթերքի մատակարարման պայմանագրով նախատեսված և 11.08.2021թ. հայտ պահանջագրում ներկայացված և Ձեր կողմից խոստացված ապրանքների մատակարարումը չի իրականացվել: 16.08.2021թ. Ձեր ընկերության աշխատակցի հետ ունեցած հեռախոսազրույցում մեր կողմից ապրանքների մատակարարման պահանջին պատասխան նա նշեց, որ ապրանքները չեն մատակարարվելու և մենք կարող ենք սկսել պայմանագրի լուծարային գործընթաց:

Խնդրում եմ ներկայացնել պարզաբանում»:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը 20.08.2021թ. թիվ 1 որոշման 1-ին կետով որոշում է կայացրել սույն թվականի օգոստոսի 20-ից միակողմ հրաժարվել ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Ազուռ» ՍՊԸ-ի միջև 29.12.2020թ. կնքված ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Վ-Ա ծածկագրով կնքված «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման պայմանագրի կատարումից:

Պատվիրատուի կողմից Տեղեկագրում 20.08.2021թ. հրապարակվել է Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին ծանուցումը:

Այսպիսով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ ***մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:***

Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի համաձայն՝ Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

Պայմանագրի 6.6-րդ կետի համաձայն՝ Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ Պատվիրատուն 02.08.2021թ. և 11.08.2021թ. Ընկերությանը ներկայացրել է սննդամթերքի մատակարարման հայտեր՝ հայտերում նշելով մատակարարման վերջնաժամկետ, մինչդեռ՝ Պայմանագրով նախատեսված չէ որևէ դրույթ, որը կնախատեսեր ապրանքի մատակարարումը հայտի հիման վրա իրականացնելն ու հայտով վերջնաժամկետ սահմանելը:

Միևնույն ժամանակ հարկ եմ համարում արձանագրել, որ Պայմանագրին կից N 1 հավելվածով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, ***որպես ապրանքի մատակարարման ժամկետ սահմանվել է 25.12.2021թ.,*** իսկ Պայմանագրի 2.1.7-րդ կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը, որպիսի խախտում է համարվում համաձայն Պայմանագրի 2.1.7.1-րդ ենթակետի բ) պարբերությամբ ***ապրանքի մատակարարման ժամկետները 5 օրից ավելի խախտելը, այսինքն՝ Պայմանագիրը լուծելու օրվա դրությամբ՝ 20.08.2021թ., առկա չեն եղել***

<u>Պայմանագիրը միակողմանի լուծելու համար Պայմանագրով նախատեսված էական խախտում արձանագրելու հիմքերը:</u>

Այսպիսով՝ գտնում եմ, որ թեև «Ազուռ» ՍՊԸ-ն իր և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության միջև 29.12.2020թ. կնքված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԳՀԱՊՁԲ-21/1-Ս-Վ-Ա» ծածկագրով կնքված «Վարդենիսի նյարդահոգեբանական տուն-ինտերնատ» ՊՈԱԿ-ի կարիքների համար սննդամթերքի մատակարարման պայմանագրի շրջանակներում դրսևորել է ոչ պատշաճ վարքագիծ, այնուամենայնիվ, տվյալ դեպքում, հնարավոր չէ արձանագրել Ընկերության կողմից Պայմանագրով սահմանված որևէ դրույթի խախտում:

Նման պայմաններում գտնում եմ, որ առկա չեն Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության՝ 30.08.2021թ. թիվ 26/26-1/13772-2021 գրությամբ «Ազուռ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**